

բուստեցին իրենց քնարին ամենն ուժեղ
զարկով Հին կղզիները և մահաւանդ Իշ-
խանաց մեծ կղզին, գիշերուան մէջ իրեն
ուրուական տիպարով և մշտածիժաղ լուս-
նակի ծայտով, յափշտակեցին անոնց բո-
րբուսած միտքը: Հեռու հայրենիքէն, հոն
իրենց ծննդավայրը, իրենց շուրջը կը հաւա-
քէին, կը բազմանային զաղթական Հայեր,
վանեցի, Անեցի, Բաղէշցի, Մշեցի, և այլ եր-
կու մեծ բանաստեղծները այդ արենակից գա-
ղութներու հոգւոյն մէջ կը թափանցէին, և
անոնց երեւին վրայ կը կարգային բնաշ-
խարհի բնական տենչը, գորովը, կսկիծը,
խեղճութիւնը, աղքատութիւնը. և այդ ամէնը
գիրենք կը յուզէր, կը խանդավառէ և կը
մկեր երգելու և ողբալու Հայրենիքը. որ
կանգուն մը հող չի տուաւ անոնց խաղաղ
քննոյ ննջարան լինելու: Եւ հարազատ գա-
ւակներն անհարազատ երկրին մէջ մտան
հանգչելու: Շիրշիի միայնութիւնը, անա-
պատը, փայլուն ժողովներն և լուսնակն ար-
ծաթթաթիկ՝ կը հսկեն անոնց գերեզմանին
վրայ: Տեղացի հայութիւնը անոնց վրիթն վե-
րու չի տնկեց սգազգեցիկ սեխամզկոտ նոճ
մը և ոչ լալական կամ ողբական ուռենի մը:
Անշուն գաճաճ բուրգ մը՝ հսկայ և նշանաւոր
հանճարին՝ Պէշիկթաշիանին վրայ իբրեւ յա-
ւերժական յիշատակ կը կանգնի. իսկ հայ-
րենի ողբերգութեանց ողբերգուն՝ կը ննջէ կից
Պէշիկթաշիանի, և միայն բուսական ցեղի
զայրոյթը՝ փոշու և տառասկը՝ կը պատէ իր
ոսկրներուն վերմանկ հողը. Հայ-Հոռովմէական
հասարակութիւնը զլացած է իր հոշտակաւոր
քերթոյնին՝ թատերադրին վրայ քարէ-կամ
փայտէ խաչ մը տնկելու: Քանի՜ երախտազէտ
ենք մեր հանճարներուն... Պահ մը կը մնամ
Շիրշիի գերեզմանատան մէջ. հոն կայ ըսին
ինծի Հայ-Հոռովմէական հասարակութեան
հանճարներէն մի քանին. ատոնք սիրելի են, ա-
տոնք մեր ուշադրութեան արժանի, ատոնք են
մեր զբակնաւորեան փառքը, ուստի լաւ կը
համարիմ առանձին յօդածով մը անոնց
մտաւորական արդիւնքը քննել և ցոյց տալ,
նախապէս անոնցմէ զատ ներկայ Հայ-Հոռով-
մէական հասարակութեան ողջ գրադէտներն:

Հ. Ս. ԵՐԵՄ.



ԱՐՇԱԼՈՅՍ ԵՒ ԱՐԵՒԵԼՔ

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

(Եար. տես էջ 438)

ԲՈՒԹՄԻՄԷ՝ մեծ խորհուրդ և ամուսն ցամաքի-
բնորայի յերկրի և դասնալ ընդ ճրջնակս.
եղիւր օրինակ սրբութեամ կուսամոցս՝
զարդապիտութիւն արամց արգարոց:

Յիշելով ինչով որ կնքեցինք մեր վերջին
բաժը, եթէ ոչ անկարելի՝ բայց շատ դժուար
է պարզաբար պատմել Հոփսիմեանց նահա-
տակութիւնը, այն տա-

թիւ հետեւեալ Տրդա-
տայ դէպքն և բուր արգ-
գին Հայոց, ապա Գրի-
գորի Ելնէ մէջիդպէս և
Լուսաւորոյն զաշխարհս
մեր. մահաւանդ որ՝ ար-
դէն երկարօրէն պատ-
մուած և ծանօթ է մե-
րայոց՝ յԱզաթանգեղո-
սէ և յայլոց, ի գեղեցիկ
և յաշխոյժ ներբողէ Խո-
րենացւոյն իր երիտա-
տարութեան ատեն զը-
րած, ի Պատմութեանց
և ի ճառից Լուսաւորչի
վրայօք. յորոց նշանա-
ւոր են Գրիգորի և Յով-
հաննէս Սարկիսաւոց վա-
ղապետաց, յորս միշտ



Ս. ՀՈՒՍԻՍԻՄԷ:

խառնուին յիշատակք
Տրդատայ և Հոփսիմեայ, և ի պէտպէս Դա-
րականայն և Երգոց ի պատիւ երիցս եւս
Սրբոցս՝ զօրծակցաց Լուսաւորութեան (Տըր-
դատայ, Գրիգորի և Հոփսիմեայ), և մա-
նաւանդ ի յետին տեսակէ յիշատակարանաց՝
կոմիտաս կաթողիկոսի՝ Աճէկը Հոփսի-

մեանց կոչուած ըստ թուոյ այսուրեքնից մե-
րոց տուն տուն գեղեցիկ քաղցրանուագ քեր-
դուածէն. որ որքան արծաթն է պատւոյ բար-
ձրաստիճան երգողի՜ն և երախտեսաց իրգու-
ծին, դեռ փախաղել տայ որ մեր այսուրեքնըն
(օր երբեմն բազմաթիւ թուին) այլ աւելի
բազմաթիւ ըլլային, որպէս զի և այդ տննուն
երգն տւելի երկար ըլլալով անուշընէր զլսե-
լիս, զմալեցընէր զմիտս և հիացընէր զհո-
գիս: Արդ, յետ այսպիսի զրչաց և երգչոց՝
պատմութեանս կարգը հետեւցընելու համար՝
ուրիշ յարմարագոյն մէկ մի չեմ կարող զըտ-
նել, բայց զնոյն ինքն Հռիփսիմէ. զայն՝ որ
զԳրիգոր հրաւիրէր ելնիլ. « Չարթիբ զուար-
թուն անուն, ել » , կանչելով. թող հիմա այլ
նախ մենք կանչենք իրեն, « Արթ, ել ի Հըն-
ձանէդ, Մուտ ի սենեակն արքունական » .
և կանչէ կրածդ և ըրածդ, թողլով այն օն-
ւեաներին սաղրանքը... Ահաւա՛րիկ նա. տհա-
ւասիկ ամենայաղթն Տրդատայ գերայաղթն
Հռիփսիմէ. որ,

« Ելանէր ի Սենեկէն՝ որպէս փեսայ յա-
ռագաստէ .

Պայր տնցանէր առ Հընձանաւն, ձայն ա-
ւետեաց մատուցանէր .

1. Երգողս հնագոյն երեւի քան զՇնորհալին.
իսկ սա իբ քաղցր ոճով զիչ մի փոփոխելով՝
հրապուրէ լսել իբ ձայնն այլ:

Երջանիկ հագրահրաւ:

Այսըն մաքար Սուրբ Հռիփսիմէ.

Լայս ծագեցաւ ի Լատինէ՝

Հայոց մեծաց՝ յարեւմտէս .

Կուսական փողէն դուէր,

Տայր աւետիս Սուրբ Գրիգորի.

Փռեթա՛, ել ի վերապէշ:

Լուսաւորիչ Հայաստանի:

Համակամ ընդ Հռիփսիմէ

Վճկայունիչ Գայիանէ.

Մեզ լուսատուք յարեւմտէս .

Տանըս Հայոց ի Լատինէ:

Մովային շուշան ծաղիկ

Բուսեալ ի տանըս Թորգոմի,

Ոռոցեալ արեամբ Սըրբոյցըն

Պետրոսի և Պաւղոսի:

Ի վայելուչ գեղ պատկերին՝

Յիմարեցան ազգըն Հային:

Ուրախ լերուք, անփորձ կանայք, և ցըն-
ծացէք, կոյսք իմաստունք:

Ձի ես հարի ըզպատերազմն, և յաղթեցի
ախոյեանին:

Անդ՝ արեան հնձան հարեալ, նոր առա-
գաստ զարդարեալ:

Աստ մահու հրուէր հասեալ, զիս՝ սրայ և
հրոյ են հրաւիրեալ:

Փող հարէք ի Հռովմ՝ քաղաք. սուք ա-
ւետիս Աւաքելոցն:

Դոր հարսանիք են ինձ այսօր. եկա՛յք,
տեսէք զիս հարոնացեալ:

Քող արկէք, յօրինեցէք, կարմիր արեամբ
զարդարեցէք:

Յուզարկեցէք զիս յառադաստն, ի յերկնա-
ճեմ հարսնարանն:

Փութացարուք ի Ղոզգոթա. անդ բեւե-
ռեալ Տէրն ի խաչին,

Ձի ըզմեզ աղատեսցէ ի կոպանաց մեղաց
մերոց, —

Եկա՛յք և մեք խաչակցեսցուք. ըզփառս ի
վեր առաքեսցուք:

Որ ընտրեաց և ընկալաւ զերանելի սուրբ
Հռիփսիմեանսն 1 :

Պետք է իշխանք առ հասարակ

Եկին ի դուռն Հընձանին:

Ձձալն աւետեաց մարմնականին՝

Նսքա տային Հռիփսիմէին .

Այլ այն բանքն ուրախալին՝

Կուսին ի բոթ համարէին:

Աւետիս քեզ. կին աղատ.

Եղեր տիկին Հայոց մեծաց:

Արքայունի արեւելեանց:

Տանն Արամայ զըշխոյ փառաց:

Արթ՛ ել ի Հընձանէդ:

Մուտ ի սենեակ արքայական.

Հարսն եղեր արեւելեան:

Եւ թագաւորս առն Թորգոմեան:

Յայնժամ Սըրբոյցըն Հռիփսիմեանց՝

Ի ձայն ողբոց աղաչանաց

Աղբիւրս բըրխեալ յորք արտասուաց:

Հառաչէին առ տեք Աստուած:

« Փութացի՛ր մեզ յաշունթին:

Տէր ապաւեն, և փըրկու՛թին:

Մի թողուր զմեզ ի ձեռաց

Յօտար երկիրս խռժատատանեաց »:

* *

Յայտնի է ամենուն ընդ Հռոմիսմէն՝ իր դաստիարակն Փայիսանէ, զոր Մլար զգաւտառքեան կոչին պատմիչք և ներբողիչք մեր. յորոք խորհնացին փափուկ կերպով խօսեցընել տայ զսանն առ սանամայրն, երբ յաղթարար դարձաւ յարժունի սենեկէն՝ ի Հընձանն. « Զուարճացիր և ուրախ լեր, Փայիսանէ, մայր որդւոցն շուտոյ... ահա ծաղկեցար որպէս շուշան, և զանթառամ վարդ իմոյ կուտութեանս՝ ի քո զրկացոյ բուսեալ « փթթեցեր, ի փառս և ի զարդ Հայաստան « աշխարհիս: Արդ, մայր իմ, յուղարկեալ « զիս յառաքատս՝ առ Բանն, ուր հրաւիրեցայն. « փութ, փութ, ես ճեպիմ. զի Նիքորոդդին « իմ էանց, և ոգի իմ ել ընդ բանի նորա: « Երթամ խնդրել զոր սիրեաց անձն իմ... « ընդ Հոփանեաւ նորա հանգեայց յանստուեր « լոյս: Ել, տես զկոյս նահատակ. զհանձ « դէսն կատարեցի, զախոյեանն հարկ, զպա « տերազմ վանեցի, ի մարտի տապա պա « քեալ՝ ծարաւիմ. տենչամ մերձեալ ի հո « ցեւոր կենաց աղբիւրն՝ որ ի խաչին վասն « իմ ծարաւեալ... Եկ, տես զիս՝ մաքուր « իմով կուտութեամբս՝ ի խաչին զնովաւ ար « կեալ զիկոս, արեւմանեցի իմով յրթամբքս « զաղբիւրն աստուածային ըմպելոյն յիս « ձգելով: — Եւ ձեզ աւետիք, կուսանք ի « մաստունք. ելէք և տեսէք զդիւտն ձեր « զՀռոմիսմէն՝ պակասեալ որով պակեաց զնա « տէրն իւր՝ յաւուր նորա հարսնութեան... « Թողէք զՀընձանդ. սլացարուք ի թեւս հոգ-

Ձայն ահեղ հընչեաց յերկնից,
Բարբառ եղեւ սարսափութեան.
Մի երկնչիւք, իմ սիրելիք,
Ձի ես ընդ ձեզ եմ յաւառեան:
Զորացաւ Կոյսն ի ձայնէն,
Դիմեաց ի մարտ պատերազմին.
Եհար վանեաց զհընչեալ արջայն,
Կոխեաց զփշապն անդրաշական,
Ելանէր ի դարպասէն
Որպէս փեռայ յառաքատէ,
Առ հընձանաւս զայր անցանէր,
Ձայն աւետեաց մասուցանէր:

« ւոյն, մաքուր աղանիք և օրիորդք իմոյ
« հարսանեաց... ելէք ընդ առաւ արեւա
« ներկեալ իմոյ Փեսային, զի և դուք ընդ
« իս փայլեցէք արժեւանականորա ծիրանեօքն,
« ի փառս և ի զարդ հրեշտակաց և մարդ-
« կան... Ուրախ լեր և ցնծա, Հոսովմայեց-
« ւոց կեղեցիք, մայր Հռոմիսմէնայ և հարսն
« անմահ փեսային, հարսն առաքելական, որ
« աւետարանին թեւք ի քէն սլացան յարեւ-
« եա... Բերկերա, Այրարատ, աստուածա-
« պարգեւ աւետեօքս. ահա ելանեմ ի քողդ
« Գողգոթայ, ըմպել զբաժակ չարչարանաց
« Արարչին՝ իմոյ կուտութեան բաժակաւս.
« արբոցանել քեզ ծարաւոյդ՝ զկենարար ա-
« բանն բաժակ անմահութեան և լուսոյ: Եւ
« քեզ աւետիք, երկնաւոր նահատակ և քա-
« ռոզ փրկութեան, բազմափայլ ճառագայթ,
« որ ծածկեալդ ես ի գրբի. ահա հասի քեզ
« ի թիկունս՝ սլացեալ յարեւմտից յարեւելս
« թեթեւեղեաց ամպով իմոյ կուտութեան...
« Ծագեալ, Լուսաւորդ մեծ, ի խորոց ան-
« դընդոց, քաղցրանուագ լուսով զաշխարհ-
« արձակ ճառագայթալոյս փայլուն աւետա-
« բանին՝ սրբոց հարցն Թաղէտոսի և Բարթո-
« զիմէոսի. երկաթանիւրոցն լուսով փթթեցո՜
« զհիւսիսի... իմ և քո խաղաղութեան համ-
« բուրիւ՝ հարցն մերոց ողջոյն և խաղաղու-
« թիւն՝ զայս լցեալ աշխարհս »:

Այս քաղցր հրաւիրանաց չէր կրնար չլսել
և ուշանալ հրաւիրեալն Գրիգոր. և ահա,
« Ծագեաց ի խորոց անդընդոց արեգակն՝
« Լուսաւորիչն սուրբ, զկրմն ճառագայթս ա-
« ւետարանին լուսոյ՝ վառեալ բորբոքէր ի
« պաղտ հիւսիսոյ... զհարաւ քաղցրուսոյց

Արի՛ք, ելէ՛ք, ի Հոռոմ քաղաք՝
Տուք աւետիւ Առաքելոցն.
Հարսանիք են ինձ այսօր.
Եկայ՛ք, տեսէ՛ք զիս հարսնացեալ:
Փո՛ղ հարէ՛ք, յորինեցէ՛ք:
Կարմիր արեամբ պըսակեցէ՛ք.
Ի յառաքատս սուրբ հարսանեաց՝
Ձիս՝ տօնելով յուղարկեցէ՛ք.
Ձի անդ երթեալ բարեխօսեմ
Ձեզ տօնողացս և աղաչմ.
Ձեզ իմ փառացն կըցորդեմ,
Եւ հանդըստեանքն հաղորդեմ:

« քանին ծաւալեցուցեալ... ծաղկեցուցանէ
« զՀայաստան... քանզի Հոգեւոր հարաւ...
« նեացն կատարեալ խորհուրդ և փրկութեան
« երկանցն հասեալ ժամ, ծնանէր Հոգին
« Սուրբ յորդիս կուսին՝ ի միում վարկենի՝
« զբոլոր տէրութիւնն Պարթեւաց, և ընդ
« գիրն, « Երկնեաց Սիոն և ծնաւ ազգ մի
« զԻղն » և որպէս յայտնի է և ի շորեքարեւր
« բիւրուց բանակացն արքունի, որք ծնեալք
« ի Հոգւոյն զորդեգրութիւնն յեփրատէս, ի
« միում ժամու աւրն գաւետիս, յողացեալ
« ի վերուստ լուսոյն ծագմամբ, և և բնաւ...
« ւորն մոլեղնեալ՝ որ զկոյսն ինքեան սու...
« քել փափաքէր՝ ի Քրիստոսէ առկնցաւ...
« և զախտիցն յինքն յիշուցեալ զոցո, համար...
« սուրբեանն վառեալ հուր՝ զրեցաւ յորդիս
« կուսին. և քանին եղեալ քարոզ՝ ընդր ա...
« ւետարանական լուսով զհայրենեացն տէ...
« րութիւնն: Եւ ոչ միայն այս՝ այլ և զգանձս
« աստուածութեանն՝ զծաղիկս կուսական
« մարմնոյն՝ որ սրոյն էր արկեալ տապաւոտ,
« ժողովալ ամփոփէր զանձէր ինքեան մե...
« ծութիւն յաշիտենական. և զօրութիւն իւրոյ
« զաշխարհեան քրտունս՝ ի վկայարան Սրբու
« ցնն թողոյր յաշիտենական. և բարեաց օրի...
« նակ զինքն յարդարէր ամենեցուն. առա...
« քելական Հանդիսիւ լուսաւորէր զարեւելս՝
« Երրորդութեանն լուսով՝ » :

Ժ.

Գրիգոր Լուսաւորիչ. Ազգովն Քրիստոնէութիւն Հայոց.

Լաւ Համարեցայ այս Թուղթ մի տաք սրտի
և գրչի տողերով բացատրել Հոփսիմեանց
նախատակութենէն վերջը Տրդատայ զգաւ-
տանալը, առնոց մարմնոց փրայ վկայարաններ
շինելը, Հայոց բազմութեանն այլ Հաւատալի
ի Քրիստոս և մկրտուել յեփրատ գետ՝ Լու-

1. Թէ Յաւնաց և Լատինաց և թէ արեւե-
լեան ազգաց հին Տօնացուցից և Յայտմաւու-
րաց մէջ կայ յիշատակն Հոփսիմեան և Գայիա-
նեայ, առնուներն քիչ մի ծռաւ կամ փոխած.
Դիտեալք զՀոփսիմէ գրեն Արքիմիտրա, զԳայիա-

սաւորչի առաջնորդութեամբ, քան Հետեւեակ
ոճով և լեզուով երկարարանել Հասարակաց
հայութեան ծանօթը. — Անցողաբար կ'աւ-
զեմ լիմոսանալ վերայիշալ նախախնամական
զարմանալի և Հակադէմ դիպուածոց, այն
Համաշխարհական և արքունական շփոթու-
թեան առեւն, յետ նախատակութեան Հոփս-
սիմեանց՝ ցնորեալ Տրդատայ քրոջ Խոսրո-
վիդիսոյ՝ զգաւտ մնալը, և աստուածային
ազգեցութեամբ խորհուրդ տալը զԳրիգոր վե-
րապէն Հանելու, ինչ որ անկէ վերջն եղաւ,
իրեւ միմի հասագայթիւք լուսաւորութեանն
Հայոց ի ձեռն Ս. Գրիգորի, գործակցու-
թեամբ՝ նախ մարմնով բռնկեալ Տրդատայ
ապա և հոգեով, ազգովին մկրտութեամբ,
առաջին դիպուածոց Հաւատար՝ սոքա այլ ծա-
նօթ են Հասարակաց. նոյնպէս և կուսգնուան
Երեւոյն Հայաստանեայց, և սկիզբն նորոյ
քաղաքայայտութեան, Գրիգորի ձեռնա-
գրութեամբ ի քահանայապետէն Կեսարիոյ
կամ Ապպալադովիոյ եկեղեցւոյն. որոյ ա-
ռաքելական Հիմնադիրն այլ յիշեցինք առաջ,
որ նոյն մեր Թագչոս Աւագիւն էր, զԹեո-
փիղոս այն տող Հաստատելով, Թէ և ոչ շատ
կարեւոր խնդիր, այլ յիշել է, որ այդ Թեո-
փիղոսն՝ առ որ գրեց Ղուկաս իր աւետարա-
նը, ոմանք և ոչ անձն կ'ընդունին, այլ ըստ
յուշական նշանակութեան անուանն Աստուա,
ծաւեր, կ'իմանան զբարեպաշտ քրիստոնէայս,
որոց խնդրանօք զրեց Ղուկաս. սակայն ա-
ւելի շատք իսկական անձն Համարին, բայց
յեն գիտեր ով ըլլալը ինչ ընելը, ինչ վախ-
ճան ունենալը. և մեր նախնեաց աւանդու-
թենէն զատ՝ տարաք չեն ճանչնար զնա ա-
ռաջին քահանայապետ Կեսարիոյ, այլ իրեւ
երկրայական՝ Լոնգինոսը կամ Ղոնգինոսը՝
զոր յիշեցի. անկէ վերջը Բ դարու մէջ
Թեոփիլոսոս մի, և յետ երկար միջոց ժամու-
նակի ուրիշներ. որոց յաջորդ էր մեր խնդրած
Լուսաւորչի ժամանակ՝ Ժանօթ սուրբ և մար-
գարեաշնորհ Հայրապետն Ղեռնդիոս: Իրմէ

նէ՝ Աղաբա: Նուենէի անուան աղ ոչ ընդի էր
անուան Համարին, այլ Լատին ոտոնա բառի նշա-
նակութեամբ՝ իբր մայր կամ մամ, իսկ ընդի
անուան Թեոփիլոսոսն, որ աստուածածամեր
նշանակէ յուսարէն:

ձեռնադրութիւն ուղերն մերայոց՝ կամ Հին աւանդութենէն էր՝ Թաղէոսի Ի Կեսարիա ի բնն փոխանորդ թողուն, կամ Հայոց ամենէն մօտ քարձրաստիճան եպիսկոպոսապետ՝ Կեսարիոյն ըլլալն, որ և Փոքր Հայոց մայրաքաղաք էր ի դարուց Հետէ, և մասն Հայոց երկրի Համարեալ: Այս որ և է պատճառաւ ըլլայ՝ յայտնի և ստոյգ է՝ թէ՛ Գրիգորի թէ՛ իր առաջին յաջորդաց՝ այն աթոռէն ձեռնադրուիլն՝:

Զարմանալին այս է, թէ Խնչպէս այն աւանդութենէն Դ դարու, յամի 302, մինչդեռ Հայածանաց վախն տիրեց էր, երկու ինքնակալաց կամ Օգոստոսից և երկու Կեսարաց Հռովմէական լայնարձակ տէրութիւնը իրենց մէջ բաժնած՝ բայց իրարու կապուած ըլլալով, Տրդատ այնպիսի մեծաՀանդէս փառք և մեծագումար բանակով, իր տէրութեան ամենէն գլխաւոր 16 նախարարք և իր զօրաց սպարապետով, կառօք և երի-



Սրբուհի Աշխէմ:

վարձէ՝ իրեւ յաղթանակաւ յուզարկեց զԳրիգոր՝ դեռ սոսկական անձն, և յոյնպէս ընդունեցաւ զնա Քաղաքայապետ իր աշխարհին: Յայտմ եւս արդարեւ զարմանալի և Հակադէմ նախախնամութեան զործ կայ, զործեալ

իրեւ ի վերջին ժամու այն ինքնակալութեան, ըստ մարդկային տեսութեան. Ժամ մի, յետ որոյ՝ շուրջով պիտի փրթէր մեծ ալէկոծութիւն քաղաքական և եկեղեցական, որ և մեծագոյն յեղափոխութիւն պիտի բերէր երկու

1. Ոմանք ի նոր եւրոպացի գրողաց համարին, թէ Ղեւոնդիոս շատ ուշ Կեսարիոյ եպիսկոպոսապետ եղած է, (314-28). սակայն այդ

բոլոր մեր ազգային հիմնական աւանդութեան հակառակի, և զերթէ անկարելի է յայտմ մեր պատմչաց սխալիլն:

վարչութեանց մէջ այլ՝ լընդհանուր ուղիսր-
հի, և արդէն մրրկաց մրուրքն դիզուած էին
տիեզերական հորիզոնի վրայ: Այս վայրկե-
նիս, այս առթիս մէջ այլ՝ հրաշալի կերպով
նախախնամեալ գոտւ Հայաստան. և անգամ
մ'այլ իրրեւ համատարած հեղեղաց միջէն
բարձրացուց իր հին տապանակիր և նոր խա-
չակեր փրկաւէտ զուխը, զոր, եթէ քաղա-
քագէտ զբաղեալ աչք չբորենան նշմարել,
եկեղեցականը կամ կրօնախնդիրք՝ կրնան
տեսնել յօտակ, և պէտք է որ տեսնեն:

Յիշեցինք քիչ առաջ հռովմէական ինքնա-
կալութեան բաժանեալ և միացեալ վիճակը,
որոյ պատճառ մ'եղած է անկէ առաջ իրրեւ
կէտ գարու պոռն՝ 30 և աւելի կայսերու-
թեան փափագողաց մրցանքն, շփոթքն, կանգ-
նիլն և կործանիլն. որոց զբաղեւով այդ առ-
օրեայ ինքնակալք և անոնցմէ իսպառաքել
այնքան շէին հոգար քրիստոնէութեան խըն-
դիրը, որ համեմատաբար՝ Դեկոսի դառն
հալածանքէն ետեւ (որոյ քանի մի նախատակ-
ները տեսանք), բաւական խաղաղութիւն



Ս. Խոսրովիզուխտ :

փայլէր և անէր, և երբ անոնցմէ վերջը յա-
ջողեցաւ զաղմուտացին Գիովղէս՝ (տոնունն
այլ երկընցընելով ի Գիովղիստիանէս)՝ հասնիլ
կայսերութեան, հերկով մի աւելի համար-
ձակութիւն տուաւ քրիստոնէից և մինչեւ՝ ոչ
միայն իր պաշտօնածին մէջ կային յայտնի քրի-
ստոնեաց պաշտօնեայք, այլ և կրնն՝ Պրիսկիա
և զուստրն Վալերիա՝ քրիստոնեայք էին:
Ինքնակալութիւնն այդ սպառնգելու համար՝
մտածեց և իրեն Թագակից՝ քայց իրրեւ եր-

կորոյ կարգաւ՝ օգնական մի առաւ (զՄաք-
սիմիոս Հեթակէս). քիչ վերջը աւելի գիւ-
րաւ հառափարեաւ համար՝ իրենց մէկ մէկ
սորսիւրգեալ ընկեք առ ընտրեցին, զանոնք
կեսար անուանելով, իսկ զերէնք՝ Օգոստոս
(Augustus): Այս կեսարաց մին էր լիւրի-
կիցի (Խառաթ) հովիւ մի՝ Գալիերիոս, տիմար
և չար մարդ մի, զոր (ինչպէս վերջը յիշե-
ցինք) երբ յաղթուած ի Պարսից խաչատառ-
կարաւ զարձաւ առ գլխաւոր Օգոստոսն

Գիտկընտրանոս, սա վաղնտեց իր քովէն, մինչև որ նա Տրդատայ օգնութեամբ յա-
նդեցաւ Հեռացընէ գլխորեկ թագաւոր Պար-
սից՝ անոր անյատուկ սահմաններէն, և թո-
ղուց անոնցմէ Յայնկոյ Տիգրիսի (Հարու) կող-
ուած Հինգ նահանգները՝ մեր թագաւորին
Տրդատայ։ Այս յաղթութեամբ գտողացեալ
Պարսերն սկսաւ՝ առաջ քիչ քիչ յետոյ առեւ
գրգռել գլխորկետ, ընդդէմ՝ քրիստոնէից,
որոց մեծ յանցանք և մատնութիւն համարէր
ստաւթեամբ՝ Նիկովորդոյ մէջ (ուր այն ատեն
կենար սա) պալատան հրայրեաց լլալլը՝
Գիոկը. ճանչնալով իր կեսարին շարութիւնը՝
շատ տարի շարժեցաւ ի սկզբան. յետոյ քիչ
մի օտարիքին կամ աշխատանաց յոգնութե-
նէն, քիչ մի ինքնակալութեան շփոթութեան
և իր վտանգուելու վախէն՝ կամայ ակամայ
գիլաւ այդ խռովարար Սառութ րաճապրուին
թելադրութեանց, որոյ Հետեւանք եղաւ իր
պալատան կրակէն շատ և անհամեմատ ա-
ւելի աշխարհածանօթ և աշխարհածաւալ Հա-
լածանաց հրդեհէն, սաստիկ և մարդատախ քան
գառալիւնն։ Այս այս՝ դառնալք յետոյ աչք
մի տալ. վասն զի գեռ չէ բռնկած կրակն.
դեռ երրորդ նոր դարու 301-2 տարիներու
մէջ եմք, յորս եղաւ Հայաստանեայց առ-
Քրիստոս դարձին հրաշալիքն, և յորում՝ ա-
հա քիչ մի վերը լսեցինք Տրդատայ գորդե-
ցուցիչ և խորհարար թափորով խաւրելն
գլխորդը ի կեսարիա՝ ի ձեռնադրութիւն,
Պարսից վրայ յաղթութեանն և առաջուց այլ
Հռովմայեցոց Հետ բարեկամութեան պատ-
ճառաւ՝ Հայաստան իրրու ազատ տէրութիւն
մի էր. կեսարքն չէին համարձակեր անոր
սահմանները կոխել, ինչպէս ինքն այլ ա-
նոնքը. և որովհետեւ դեռ խաղաղութեան
(վերջին) ժամանակ էր քրիստոնէից, այդ-
պէս համարձակ եղաւ Պրիգորի Հանդիսապէս
երթուղարձն, սբ թէ և անհնոյ կեսարաց՝
այլ պատկառէին ք Տրդատայ՝ իրրու ի բա-
րեկամէ մեծի ինքնակալին, որ իրենցմէ առաջ
բարեկամ և երախտազէս էր մեր թագաւոր
րին. և ցարտ աչօք դիտէին այդ քրիստո-
նէական յաղթանակը, որ իրենց սնտի Հե-
թանոսական հեթեթանքը կոտկտելով կ'եր-
թադ դառնար։

Հիմայ, եթէ ընթերցողն փափագի՝ ուրիշ

գուցէ և քիչ մի հպարտ սրտով տեսնել այս
Հանդէսը, (որ և եկեղեցոյ ընդհանուր պան-
ծայի Հանդէս մ'է, և կերպով մի յաւիտե-
նական Հանդէս, որոշեալ երկու զլխաւորքն՝
Հանդիսադիրն և Հանդիսացեալն՝) այն եթէ
ի վեր միշտ ի Հոնդիսի են, երկուքն այլ
տեսնել Սուրբ լլալլով յեկեղեցիս մեր, մին
միակ ստոյգ առաջին Սուրբ թագաւոր քրիս-
տոնեայ և միակ Սուրբ թագաւոր ի Հայս-
միւսն՝ առաջին ի ծանօթ քահանայապետու-
թեան Հայոց, որ տեսէ յաղորդութեամբ ահա
հիշդ 1600 տարի է)՝ արդ, զայս Հանդէսը
տեսնել փափագողն՝ կ'ըսեմ, առնու ժամանա-
կակից և ակնատես պատմիչը, զլլալլաւն
գեղոս, որ արքունի դիւանագիր էր, և մեծ
պալատոնեայ խաղաղագետարեան, գուցէ և
ուղեկից Գրիգորի. րանայ և կարգայ պատ-
մութեան ձօմ զլուրը, համբէ Հայոց մեծա-
մեծ նախարարները՝ իրենց կարգաւ և ա-
նուամբ աշխարհացն, որոց էին « իշխանք
« ընտիրք, կուսակալք, կողմնակալք, հազա-
« րաւորք րիւրաւորք, ի մէջ Հայաստան աշ-
« խարհի՝ տան թորոմայ. զոր գումարեաց
« թագաւորն, և առաքեաց զնոսա ի կողմանս
« կապագովկացոց, ի քաղաքն կեսարացոց,
« զոր ըստ հայերէն լեզուին Մաճակ կոչեն.
« զի տարեալ Գրիգորն՝ քահանայապետ կա-
« ցուցեն իւրեանց աշխարհին։ Այս Հանդիս-
« ձեցեան դէտ ունել ճանապարհացն », ա-
պակովութեան համար։ Բանձնարարական
հրովարտակ մ'այլ զրեց թագաւորն « առ Ղե-
« անդիսն արքեպիսկոպոս կեսարու, և (առ)
« ամանայն ուխտ եկեղեցոյ որ այդ », իւրն-
գրելով՝ որ « զԳրիգոր՝ տեսուչ և վարդա-
« պետ առաջնորդութեան աստուածագնաց
« ճանապարհացն, հովիւ և բժիշկ, կացուս-
« չիք, որպէս և մեզ յԱստուծոյ հրամայեցաւ ».
վասն զի Աստուած տեսեամբ պատուիրեց
Գրիգորի, երբ սա հրաժարէր ի յորդորանաց
թագաւորին՝ յանձն առնուլ զձեռնադրու-
թիւն քահանայապետութեան։ Կարգաւ և
Հետեւեալ զլուսն (ձօմ), թէ ինչ պատրաս-
տութեամբ և ընծաներով գնացին, Հանելով
« զԳրիգոր յոսկիապատ կառան արքունեա-
« կան » օպիսկոպիք յորտեղ. . ի վարդա-
« շապատ քաղաքէ. . ի սահմանս Բուսնա. և
« բազում պատիւս կազմութեան Հիւրմե-

« Ժարութեան գտանէին ի քաղաքաց քաղա-
 « քաց. և բազում խնդութիւն և կայտիւ
 « ցնծութեան, խնճոյս ուրախութեան կացու-
 « ցանէին, իբրեւ լսէին զԱստուծոյ արարեալ
 « զպահնչխն... Եւ զԱւրբն Գրիգոր պա-
 « տուեալ ըստ արժանի առաքինութեանցն,
 « ճգնութեանցն վկայօրէն մարտին, կանթե-
 « ղօք և սաղմոսիւք և երգովք հոգեւորօք փա-
 « ռաւորէին... Եւ եղեալ ժողով բազում և
 « պիսկոպոսաց՝ ի քաղաքն Կեսարացոց, զի
 « ձեռնադրեցնեն զԱւրբն Գրիգորիս, և ա-
 « ւանայպետութեանն Գրիստոսի, և զբար-
 « ձրութիւն եպիսկոպոսութեան փառաւորու-
 « թեան Աստուծոյ, զպատիւ մեծ. որով ա-
 « լետարանաւն եղին ի վերայ զձեռն՝ ժողովք
 « եպիսկոպոսացն որոց, և զխաւորն Ղեւոն-
 « ղիոս, զի առցէ նա ի խաւանութիւն յերկինս
 « և յերկրի, առնուլ զփականս աքջայութեանն
 « երկնից » : Յայտ է որ նոյն Հանգիսիւ գար-
 « ձան, բայց Թուի թէ ո՛ր ճիշդ նոյն ճամբով.
 « զմասն զի Գրիգոր կ'ուզէր այլեւայլ կողմէ և
 « քաղէ՝ իր Ժառանգեալ աշխարհին Համար
 « եկեղեցական պաշտօնեաներ բերել, միան-
 « զամայն և Սրբոց նշխարներ. և ուստի որ
 « կ'անցնէր, « Կուտէին ժողովուրդք ի վերայ
 « ժողովրդոց, տեսանել զսուրբ եպիսկոպոսն
 « Գրիգորիոս, զի օրհնեցոյն ի նմանէ. և
 « ասէին ընդ միմեանս, Եկաք, տեսցուք
 « զսուրբ եպիսկոպոսն Գրիգորիոս. այս այն
 « այր է, ասէին, որ վասն Գրիստոսի Համ-
 « բերեալ, չարարեալ, վկայ Հաւատարիմ
 « գտեալ, զխոստովանողական անուն Ժա-
 « ռանգեաց » : Ոչ պատուաւելու իբրեւ սուրբ,
 « այլ զԱւրբն պատուելու Համար՝ Լուսաւորիչ
 « դէպ ի Սերաստիա ուղղեց զճամբան, և յար-
 « մար անձինքներ « Հաւանեցուցանէր ընդ իւր
 « գալ, զի փնակեցուցէ զնսա ի քահա-
 « նայութիւն՝ յիւրում աշխարհին, և բա-
 « զում գունդս յաճախեալ սանդոր ընդ իւր,
 « և մեծարանօք մեծաբեալ յեպիսկոպոսաց
 « աշխարհին և յիշխանաց և ի ժողովրդոց...
 « Եւ այսպէս բազում օթեմեանօք անցեալ՝
 « առողջութեամբ յաղողութեամբ և հոգեկից
 « ուրախութեամբ եկեալ Հասանէին ի Հայաս-
 « տան աշխարհ... Իբրեւ դարձեալ գայր ի
 « կողմանց Յունաց, բարձեալ բերէր ընդ իւր

« նշխարս ինչ յոսկերացն մեծ ժարգարէին
 « երանեալ Մկրտչին Յովնանեոս, և զՍ. վկայն
 « Գրիստոսի զԱրամեայիմեոս » : Այս Ս. Ա-
 « թնոգինէս՝ ըստ ոմանց էր քորեպիսկոպոս
 « փխարքովեալ քաղաքին Սերաստացոց. սա-
 « կայն այն ատեն զեռ ողջ էր նա և տարի մի
 « վերջը նահատակեցաւ. Գրիգորի բերածն էր
 « ի Կեսարիա Ս. Ղեւոնդէն առած՝ ի Պնոսոս
 « նահատակուած Երգիլ Ս. Աթնոգինէսն, զոր
 « Ս. Բարսեղ ներբողած է : — Ի մտնելն ի
 « Հայս՝ Ս. Գրիգոր ուղղակի չի գնաց տա թա-
 « զաւորն, այլ Տարօնոյ կողմերն եկաւ, որ
 « կոպալաւորութեան զխաւոր կենդորն մ'էր.
 « աւրեց և կործանեց կողաց բազինները և մե-
 « հանները, և անոնց տեղ դրաւ բերած Սրբոց
 « նշխարներէն, և յետոյ եկեղեցիներ և վան-
 « քեր Հաստատեց, որք մինչև Հիմայ Ժանթթ
 « և անուանի ուխտատեղիք են. ինչպէս Մշոյ
 « Ս. Կարապետն, Առաքելոց վանքն, և այլն.
 « ուրիշ անցած կողմերում այլ նշան և խաչ
 « դնէր, յետոյ եկեղեցիներ շինելու Համար, և
 « 200,000 շափ մարդ մկրտեց յառաջ քան
 « զՀանինն առ Տրդատ : Սա լսելով անոր մօ-
 « տենալը՝ ելաւ արքունեօք, Ալիսէն տիկնաւն
 « և Խոսրովիդիստով, իշխանօք և զօրօք, նոր
 « Թափրով մի. եկաւ ի Բագուան, Աւաղիւր-
 « տի կողմերը, ուր Հայաստանի ամէն կողմէն
 « միլիոնաւոր մարդիկ ժողուեցան. Գրիգոր մօ-
 « տուց առ Թագաւորն Ս. Ղեւոնդի Թուղթը,
 « յորում սա յետ խնդակցութեան՝ արժանաւոր
 « խրատներ տալ. և ի մասնաւորի խնդրէ՝ որ
 « ինչպէս Հայոց այդ առաջին քահանայապետն
 « ի Կեսարիոյ քահանայապետէն ձեռնադրե-
 « ցաւ՝ նոյնպէս և անոր յաջորդքն ի Կեսա-
 « րիա ձեռնադրուին :

Մեծ եռանդամբ երկար օրեր այն կողմե-
 « րը շրջելով Ս. Գրիգոր՝ երբեմն մինակ իր
 « պաշտօնէիւք, երբեմն Թագաւորին հետ, կու-
 « տունները և անտի պաշտամունքը շնչել չա-
 « նայր. ապա՝ պաշօք և աղօթիւք և խրատ-
 « ներով պատրաստելով զարքունիսն և զգորդ-
 « վուրդն, նախ զԹագաւորն և զընտանիսն և
 « զօրաց բազմութիւնն՝ իբրեւ 150,000 ոգի
 « մկրտեց յԵփրատ գետ, որոյ շուրջ՝ հրաշքով
 « չրջան առած յետ ու յառաջ դառնային, և խա-
 « չանշան լոյս ծագեց. յետոյ Եօթն օրուան մէջ
 « 4,000,000 մարդ « ընդ այր և ընդ կին » մկր-

տուեցան, ըստ պատմութեան գրոց Ագա-
թանգեղոսի, եթէ թուականարի մէջ առելի
կամ բակատ չկայ, էւ զի այն տեղն ուր այս
ընդհանրական վերածնութիւնն Հայոց եղաւ,
մինչեւ այն րատն արդէն Հեթանոս Հայոց
աշխարհախօսքն տօն կատարուէր՝ նոր տարւոյ
Ամանորարեր Նաաթարգի դից անուամբ, Ս.
Գրիգոր Հաստատեց՝ որ նոյն տեղ նոյն օրի-
շում, « ի յիշ-

« տակ մեծի երա-
« նելոյն Յովհանն
« նու և Ս. վկային
« Աստուծոյ Աթա-
« հագինի՝ յայնմ
« ազար խմբիս-
« ցին՝ ի նմին ա-
« լանի » : Եւ ինչ-
պէս նոյն տեղ էր
Հայոց Հեթանո-
սական կրօնից ա-
մենէն հոչակեալ
պաշտօնարանն
կամ մեհեանքն,
Յաշխաւտ, նոյն-
պէս Հոն Հաստա-
տեց նոր քրիստո-
նէական կրօնից
գլխաւոր կամ ա-
ռաջին եկեղեցին
եւս. « Նախ անդ
« արարակիզմն չի-
« նելոյ եկեղե-
« ցեաց, կ'ըսէ Ա-
« զաթանգեղոս, և
« ուղղի սեղան յա-
« նուն Ս. Երրորդ-
« դուրեան, կազ-
« մել արագան
« մկրտութեան » :

Առելի բացայայտ Բուզանդ. (Դ. Գ.) « ի մեծն
« յառաջին, ի մայր եկեղեցիացն Հայոց, որ
« էր յերկրին Տարօնու » : Ուրիշ տեղ ալ
պարզաբար կոչէ գտեղին՝ « Աթոռ իշխանու-
« թեան հայրապետացն » Հայոց, Նոյն ինքն
և այլք և պատմութիւնն ինքն վկայէ, որ այս
էր և « տեղի ժողովոց Սիւնհոսին » (Դ. Գ.)
այսինքն ազգային եկեղեցական ժողովոց :

Այսպէս ամեն տեղ՝ ուր Հեթանոսական
նշան կար զայն ընկերով՝ վրայն Գրիստոսի ամե-
նայալք խաչն կտնցնեցաւ, և ինչպէս պատ-
մեն և ժամանակիցքն Ազաթանգեղ և Ջե-
նովք և յետպայք, Հայոց երկրի արեւմտեան
կողմէն՝ յեկեղեցեաց՝ մինչեւ ի հարապակին
արեւելեան սահմանս Ատրպատականին՝ չըլե-
լով ընկեր զհետս Հեթանոսական և հառաւա-



Ս. Գրիգոր լուսաւորելն մկրտէ զՏորղոս

չեալն Ջենովք) ի Յունաց և յԱտրոց, որք
ունէին զթարգմանութիւնս Ս. Գրոց և ե-
կեղեցական պաշտամանց և պատարագի գի-
րքեր. և Հայերէն գիր չըլլալուն համար, (ո-
րոյ Հնարքն և գիւտը՝ Աստուած պահէր էր
անոր վերջին մեծ Թոռան, Ս. Սահակայ)
լանաց ամեն կողմ ամեն մարդաշատ քաղքի
և աւանի մէջ՝ այն երկու լեռնաց քաղոց և

տէր զՔրիստոսին.
ինչպէս յիշեցինք
սառլ ալ իր այց-
ելութիւնն Ս.
Հովսէփիմեանց կո-
խած տեղերուն, և
քրիստոնէութեան
հետք գտնելով ա-
ռելի զարգացընե-
լը՝ Համաթոս ը-
սելով, Ս. Գրիգոր
իր բոլոր քաւար,
նայապետութեան
30 և առելի տա-
րիները՝ մինչեւ յա-
ռանձնախաչն ճրգ-
նաւորապէս ի լի-
րինս և ի քարայր,
անդադար չըլէր՝
իր ոչ փոքր եր-
վուրթեան վիճա-
կին մէջ՝ այս լան-
քով միանգամայն
և քարոզելով, բազ-
մացընելով եկեղե-
ցիներ և մատուո-
ներ, անոնց համե-
մատ նա և պաշտօ-
նեաներ, քահա-
նայ և եպիսկոպոս.
(յորոց մէջ, և չի-

ուսմունքը հաստատել. և ուր որ իմանար թէ կայ գիտնական և եռանդուն եկեղեցական՝ քահանայ կամ կրօնաւոր, եթէ կարելի էր տեղէն շարժել, կ'որոտար բերել, պաշտօնեայն և ուսուցիչ կարգէր, ցրուէր իր վիճակին մէջ, որոյ ընդարձակ սահմանները յիշեցինք Հայոց Թաղաւորութեան սահմաններն յիշած ատեննիս: Թայց Գրիգորի Լուսաւորութեան սահմաններն աւելի ընդարձակը էին, հիւսիսէն՝ անցաւ ի Վրաստան մինչեւ ի Կովկաս. արեւելքէն Ղազաւան, և երկուքին միջեւ ի հիւսիս արեւելից՝ այլեւայլ կովկասային և կազբիական բարբարոս ազգաց, ինչպէս Լփինք, Ճիւղք, Հոնք, Մաղզուիք, և այլն. ասոնց երիտասարդ եռանդուն հովիւ մի տուաւ, իր անուանակիր Թոռնիկը, որդի անդրանական՝ Ս. Վրթանիսի, Ս. Գրիգորիսը, որ և անվախ քարոզութեամբ նահապետեցաւ՝ (իրր յամի 348) անհաւան բարբարոսներէն. բայց իր քարոզութեան կեդրոնն՝ եղաւ Սղուանից կաթողիկոսութեան աթոռ, որ և շարունակ յաջորդութեամբ տեւեց մինչեւ մեր՝ Երբըր: Նախախնամական շնորհք մ'այլ եղաւ Տրդատայ Երկարակեցութիւնն, և մանաւանդ քաջահաւատութիւնն, Շանքն և զօրութիւնն (ինչպէս յիշեցինք առաջ), որ յամենայնի արակից և ծորեմն և առաջնորդ եղաւ Գրիգորի ի Լուսաւորութիւն աշխարհէն. և լուսոյ դիմամարտ խաւարասեղները վանեց նուանեց Նախախնայ յաջորդութեամբ, այլ և ոչ սակաւ արխատութեամբ և պատեալութեամբ արկածներով, թէ իր տէրութեան մէջ անհաւան քրմաց և անոնց այդ աստուաց հէմ, թէ իր վրայ անոնց խորհրդակցներէն զրդոնած հիւսիսէն և արեւելքէն՝ Կապա և յարեւմտից (զոր պիտի յիշենք յետոյ) հրոս տուողներու դէմ, երբեմն նա և իր կենաց վտանգաւ. և հարկ է խոստովանել՝ որ Գրիգոր խալով, Տրդատ Թրքով անակեցան հաստատեցաւ և բարեբաղննէր. Հայոց քրիստոնէութիւնը, մինչդեռ ընդհանրաւ քրիստոնէութիւնն, տաղանայի մէջ էր գտնէ՝ 10 կամ 15 տարի, և ինչ տարիներ յետոյ:

Այս Ժամանակին Հայոց յատուկ աննման փրկակը իւր. Ժամանայոց համար՝ պէտք է լալ տա. ձեռք նայել հասարակաց փրկակն այլ տեղներու: Այլ կ'ըսեմ՝ մերոց անկասկած, զոր

լաւ ստորագրէ Ագաթանգ. իր պատմութեան վերջին (ձեռնագիր) գլուխներում. մանաւանդ այս նշանական կնքիչ խօսքերով. « Յայնմ « Ժամանակի՝ երանելի ցանկալի և անպայշ « ման աքանդիլի լինէր երկիրս Հայոց. որպէս « Մովսէս յանարծ ուրեմն օրէնսդուստց հե « բրայականին, ամենայն մարգարէական դա « սուն, և կամ իբրեւ. յառաջագնէն Պօղոս « բովանդակ առաքելական գնդաւն հանդերձ « աշխորհակեցոյց արեւտարանաւ Քրիստո « սի, օրնպէս և դա (Գրիգոր) եկեալ հպ « սեալ երեւեալ՝ հայրաբարբառ Հայերենա « խոս գտաւ »: (Ուրեմն, թէ և Հայ գիր չկայր, կամ եղածն մեզի անծանօթ է, և թէ և յոյն և ասորի վարպետներ բերաւ, այլ Հայերէն Թարգմանել յսէ և խօսել տայր) ... « Եւ « բարձմացոյց կացոյց տեսուչս եպիսկոպոսս « յամենայն գաւառս Հայոց իշխանութեանն « իւրոյ. և որ եպիսկոպոսացն յաշտեմն ձեռ « նադրեցան ի նմանէ՝ անկի քան զլորեքնա « յինչ եպիսկոպոս, որք կացին տեսուչս տե « ղեաց տեղեաց. իսկ զկարգս երկցանց և « կամ տարկաւագաց (և զպրաց) և որ այլ եւս « ի պաշտօն Տեսուչն կացին, անթիւք էին ի « բացգնործէն: Եւ վասն զի և աշխարհս Հայոց շատ խաղածախք էր այն ատեն, որոյ նշմար մի կըրնանք ունենալ՝ Չննովայ Տարօնայ կողմի քրմաց կայուածոց անդերուն Հարիւրատոր տուներու և զինակրաց թիւերը համարելով:

Պատմիչս զՄովսէս յիշելով՝ կըրնար յիշել անոր գործերու ատեն՝ յԵգիպտոս՝ նա և զՔսենմ երկիրը. ուր Հեբրայեցիքն ի հանգրտեան և պայծառութեան մէջ վայելին, մինչ այն երկրին չորս դին՝ մթան. վաղի և պէսպէս հօտաւածոց ներքեւ տարապատ տարափոստի կիսամահճաւորէր. և ոչ օրտաւ ուր հակակեցաւ տեսարան. մինչ եկեղեցւոյ զրաց վերջին և հորոգացն փոթորիկն փրթի, և երկրիս կից փասանց քահանայապետներ (Մարկեղոս, Ի. Հովսէփ, Պետրոս Ալեքսանդրոս, Կիլիկի. ՍԱնտիւք), զոհնն դանձնապարհապատ, և Հայոց նոր քահանայապետութիւն կանգնեալ կայ խաղաղ ընդ պաշտօնաւորութեամբ Տրդատայ, և քահանայապետ Գրիգոր գիտէ գտնենք. յիշէ, և իր թափած արիւնն և քրտննը և քոհակայ զԱստուգով, որոյ շնորհքը լաւ գեղեցիկ խորհրդածու

Թեան Լատիվերտցոյն (զլ. Ժէ) « Երանելի
« այրն Աստուծոյ՝ մեծն Գրիգորիոս, իջեալ
« ի խորութիւն վերապին՝ զհնգետասան տմ
« փորձեաց, և ի վերայ Ասաքեպան արու-
« սոյն՝ եղ. զարոտ խոր »:

Շարայարեյի 2. 7. 4. Խ. ԱՆԴԵԱՆ



ԼՈՒԹԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԻԱԶԻԵ ԵՒ ԵՐԳԵՅՈՂՈՒԹԵԱՆ ՇԱՐԱԿԱՆԱՑ

(Շար. տես էջ 460)

ԳԼՈՒԽ Գ.

Չայնաստիման ցուցնող նշանը.

ԱՌԳԱՆՈՒԹԵԱՆ մէջ ձայնը ինքնա-
բերաբար այլեւայլ վանկերու վրայ կը բար-
ձրանայ ու կը ցածնայ, որով ձայնի եղա-
նակաւորում մը յառաջ ու գայ. և անոնց
նշաններն են շեշտն ու բութը: Դիւրին է
երեւակայել թէ ինչպէս հնարուած են անոնք.
Երբ հարկ էր նշանակել բարձրացումն ձայ-
նի՝ գրողը բնական կերպով բարձր գիծ մը
կը քաշէր վանկին վրայ, որ է շեշտը. իսկ
Երբ ցածցունել զձայնը՝ գիծ մը կը քաշէր
վանկին վրայ զէպ ի վար՝ որ է բութը: Երգե-
ցողութեան մէջ ալ որովհետեւ ճիշդ նոյն
գործը կը կատարուի, ամենաբնական կերպով
կ'երեւի որ նոյն նշանները գործածեն են:

Այսպէս հին ատեն Լատինք երգ մը գրի
վրայ անոնց համար, թէպէտ այլեւայլ կեր-
պեր հնարած են, բայց սովորականն և բնդ-
հանրացածը նշաններ էին, զորոս բառերուն
վրայ կը դնէին և neume (խազք) կը Գո-
շէին, և իրենց յատուկ ձեւովը կը զանա-
կանէին որ և է գրոց տառերէ: Այս neume
բառուած խազերուն զլիաւոր հիմունքն (virga)
շեշտ (') և (punctum) բութ (') նշաններն
են. շեշտը՝ ձայնը բարձրացունելու նշան է.
իսկ բութը՝ ցածցունելու նշան: Միացնելով
այս երկու նշանները՝ առաջ կու գայ երրորդ
ձեւով նշան մը (') զոր իրենք (clivis) կը
հոշեն, որ է մեր փշաղարձը, ինչպէս նոյնին
ներհակը (') զոր (podatus) կը կոչեն՝ որ է

մեր փռաշը: Այս շեշտերուն և բութերուն այլ և
այլ դասաւորութիւն տալով, շատ ձեւեր առաջ
եկան, և իրենց յատուկ անուններ ունեցան,
և ամէնը մէկն neume կոչուեցան. ինչպէս
պիտի տեսնենք յետագայ ցուցակին մէջ:

Այսպէս և մեր Շարականք ունին իրենց
խազերը, որոնք լատինաց պէս բառերուն
վրայ կը գրուին. և անոնց պէս շեշտը (')
ձայնը բարձրացունելու նշան է, իսկ բութը
(') ցածցունելու նշան, ինչպէս կ'ուսուցանէ
նաեւ Յովհան Երզնկացին իր՝ Գերարկանու-
թեան մէջ, ըսելով « Ձի որպէս նա (շեշտն)
ի վեր հանէ, սա՝ (բութն) ի խոնարհ նմա-
նապէս զիջուցանելով »: Այս երկու նշաններն
են և ի մեզ զլիաւոր հիմունք՝ որովք կը
ձեւանան և այլ բազմաթիւ խազք. զորորի-
նակ փուշը ('), փշաղարձը ('), ներքնախազը
('), վերնախազը ('), զարկը ('), բենկարճը
('), և այլն:

Դիւննք արդ յետագայ ցուցակը, անընդ-
զայն մեծնուն Հ. Յովսէփ Պօթիէ բնիկերի-
պեան կրօնաւորի բազմահմուտ գրքէն, յո-
րում կը նշանակէ Լատինաց բոլոր neume
ըսուած խազերը, իրենց անուամբք և ձե-
ւերով և զօրութեամբ. և անոնց զիմաց մեր
շարականաց համապատասխան խազերը, և
յայտնի պիտի տեսնուի թէ՛ նոյն օրէնքով
շինուած են երկուքն ալ, և նոյն ձեւերով.
Ի իրենց հիմնական նշանները նոյն զօրու-
թիւնը ունեցած ժամանակ, անտարակաւելի
է անհրաժեշտով ձեւացած միւս խազերուն ալ
համազօր ըլլալը: Միայն պիտի տեսնենք որ
Լատինաց շեշտով ու բութերով ձեւացած շատ
մը խազեր, զորոս իրենք զատ զատ կը գրին,
մեր Հարք միացուցեր են շեշտն ու բութերը,
և վերնախազի ու ներքնախազի ձեւեր բառեր
են. Թերեւաւ պարզագոյն և լաւագոյն համա-
բերով այնպէս գրել, որովհետեւ բոլորը մէ-
կէն մէկ խազ մը կը կազմեն և անբաժան
կ'երգեցուի. ինչպէս /' elimaacus resu-
pinus ըսուած խազը՝ Թէպէտ չորս զանա-
կան կտորներէ կազմուած է՝ ալլ մէկ խազ
մը կը ձեւացունէ: Սակայն պէտք է գիտ-
նանք, որ մեր խազերուն մէջ ալ կը գտնուին
Լատինաց պէս՝ բառի մը կտորներէ ձեւացած
մէկ խազ, զորորինակ